ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060656505 info@mecamor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 մայիսի 2024 թվականի N 1512-Ա

ՄԱՍՆԱԿՑԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջների համաձայն, ուսումնասիրելով ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-24/42 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի նախագահի կողմից 13.05.2024թ-ի զեկուցագրով «ԳԼՈԲ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1.Գնահատող հանձնաժողովի նախագահի ներկայացրած փաստերը և պահանջը.

Գնահատող հանձնաժողովի նախագահը Պատվիրատուի ղեկավարին ուղղված 13.05.2024 թ-ի զեկուցագրով հայտնել է հետևյալը.

Մեծամորի համայնքապետարանի կարիքների համար 2024 թվականի ապրիլի 05-ին հայտարարված Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ԳԼՈԲ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ-ն, որի կողմից ներկայացված հայտի գնահատման արդյունքում 19.04.2024-22.04.2024 թթ. նիստը կասեցվել է և առաջարկվել մասնակցին ներկայացնել հրավերով սահմանված Հավելված 1.1-ի 4-րդ կետի Բ ենթակետով սահմանված պահանջվող տեղեկատվությունը մասնավորապես՝ սույն

- Կատարողը՝ սույն տեխնիկական բնութագրով նախատեսված ծառայությունների մատուցման համար պետք է ներգրավի առնվազն վեց աուդիտոր, որոնք պետք է ունենան Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում, աուդիտի ոլորտում (ներքին և (կամ) արտաքին) մասնագիտական

պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել: Մասնակիցը նշված ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

Կարգի 41-րդ կետի համաձայն, եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն, եթե Կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպիսով՝

«ԳԼՈԲ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ-ի կողմից Մեծամորի համայնքապետարանի կարիքների համար հայտարարված Ընթացակարգին ներկայացվել է մասնակցության հայտ:

«ԳԼՈԲ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ-ի կողմից մասնակցության հայտի գնահատման արդյունքում հրավերով սահմանված պահանջների նկատմամբ գնահատող հանձնաժողովի կողմից ծանուցվել է գրություն համաձայն որի մասնակիցը պետք է տրամադրի Հրավերի հավելված 1.1-ի 4-րդ կետի Բ ենթակետով սահմանված պահանջվող տեղեկատվությունը:

Գնահատող հանձնաժողովը 19.04.2024թ-ին նիստը կասեցրել է և նույն օրը ծանուցմամբ առաջարկել է «ԳԼՈԲ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ-ին մինչև 22.04.2024 թ-ը ներառյալ ներկայացնել հրավերով պահանջվող տեղեկատվությունը:

Ուսումնասիրելով ներկայացված հիմքերը, դրանք համադրելով առկա ապացույցների հետ՝ արձանագրում եմ, որ «ԳԼՈԲ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ-ին թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

գործունեության առնվազն 3 տարվա փորձ, որից առնվազն մեկը՝ 5 տարվա աշխատանքային փորձ միայն ներքին աուդիտի ոլորտում, համատեղությամբ չաշխատեն ներքին և /կամ/ արտաքին աուդիտի ծառայություններ մատուցող այլ կազմակերպություններում, կամ այլ կազմակերպություններում աշխատեն որպես ներքին աուդիտոր:

- Վերոնշյալ աուդիտորներից առնվազն մեկը պետք է ունենա ներքին աուդիտորների միջազգային ինստիտուտի կողմից իր կրթական ստանդարտներին համապատասխան անցկացված քննությունների արդյունքում տրված ներքին աուդիտորի որակավորման (Certified internal Audit-CLA) վկայական կամ Որակավորված երդվյալ հաշվապահների ասոցիացիայի (the Association of Chartered Certified Accountants-ACCA) լիիրավ անդամի վկայական, առնվազն մեկը պետք է ունենա գնումների համակարգողի որակավորման աստիճան, առնվազն մեկն էլ՝ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման օրենսդրության իմացությամբ և հանրային հատվածի հաշվապահի որակավորման վկայական:
- Մասնակիցը հայտերի գնահատման փուլում, գանահատող հանձնաժողովի պահանջով և սահմանված ժամկետում հանձնաժողովին է ներկայացնում առաջադրված աշխատակազմում ներգրավված աուդիտորների հաստատված գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև վերջիններիս անձնագրերի, որակավորումը և մասնագիտական ստաժը հավաստող փաստաթղթերի պատճենները:

23.04.2024թ-ին Հանձնաժողովը արձանագրել է, որ

- Մասնակիցների կողմից սահմանված ժամկետում և կարգով՝ համակարգի միջոցով ներկայացվել են հրավերով պահանջվող տեղեկատվությունը, սակայն «ԳԼՈԲ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում հանձնաժողովը արձանագրել է, որ ներկայացված տեղեկատվությունը չի պարունակում տեխնիկական բնութագրի 8-րդ մասով «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշներին ներկայացվող պահանջները:

Մասնակիցների կողմից աշխատանքային ռեսուրսների առկայության մասին իրենց աշխատանքային խմբի վերաբերյալ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվեց. Մասնավորապես՝ «ԳԼՈԲ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ-ի

N	Անուն Ազգանուն	Որակավորում	Ներքին աուդիտորի մասնագիտական ստաժ
1.	Դավիթ Հարությունյան	Տնօրեն, ACCA լիիրավ անդամ, որակավորված արտաքին և ներքին աուդիտոր N205	ներկայացված N205 համարի որակավորումը տրվել է 09.06.2023 թվականին չունի 3 տարվա փորձ
2.	Սամվել Հովսեփյան	Ներքին աուդիտի բաժնի ղեկավար, որակավորված ներքին աուդիտոր N191	ներկայացված N191 համարի որակավորումը տրվել է 23.12.2022 թվականին չունի 3 տարվա փորձ
3.	Կարինե Շահինյան	ACCA լիիրավ անդամ, որակավորված արտաքին և ներքին աուդիտոր N15 (այլ)	ներկայացված N 15 համարի որակավորումը ուժի մեջ է եղել մինչև 01.01.2023 թվական

4.	Սուսաննա Սեդրակյան	Ներքին աուդիտի խմբի ղեկավար, որակավորված ներքին աուդիտոր N138	բավարարում է պահանջներին
5.	Զաբել Մաթոսյան	Որակավորված ներքին աուդիտոր N10, որակավորված գնումների համակարգող N6	բավարարում է պահանջներին
6.	Վահան Հարությունյան	Որակավորված ներքին աուդիտոր N29, հանրային հատվածի որակավորված հաշվապահ N97	բավարարում է պահանջներին

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները՝ առաջարկում ենք «ԳԼՈԲ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ-ին՝ 1-ին չափաբաժնի մասով, գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով կայացնել պատճառաբանված որոշում և հիշյալ որոշումը գրավոր ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ «ԳԼՈԲ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ-ի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

2. Գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

Մեծամորի համայնքապետարանի կարիքների համար հայտարարված Ընթացակարգի շրջանակներում մասնակցության հայտ ներկայացրած «ԳԼՈԲ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ-ի մասնակցության հայտի գնահատման արդյունքում 19.04.2024-22.04.2024 թթ. նիստը կասեցվել է և առաջարկվել մասնակցին ներկայացնել հրավերով սահմանված Հավելված 1.1-ի 4-րդ կետի Բ ենթակետով սահմանված պահանջվող տեղեկատվությունը, սակայն 23.04.2024 թ-ին Հանձնաժողովը արձանագրել է, որ ներկայացված տեղեկատվությունը չի պարունակում տեխնիկական բնութագրի 8-րդ մասով «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշներին ներկայացվող պահանջները:

3. Պատվիրատուի ղեկավարի հիմնավորումները և եզրահանգումը.

Մեծամորի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Է. Հովհաննիսյանս (այսուհետ՝ Պատվիրատուի ղեկավար), ուսումնասիրելով Գնահատող հանձնաժողովի նախագահի կողմից ներկայացված զեկուցագիրը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, վարում և հրապարակում է լիազորված մարմինը: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ՀՀ ֆինանսների նախարարությունը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Գնահատող հանձնաժողովի նախագահի կողմից ներկայացրած հիմքերը՝ «ԳԼՈԲ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցողների ցուցակում ներառելու համար, գնահատել բավարար:

2. «ԳԼՈԲ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ-ի ներքոնշյալ տվյալները համապատասխան հիմքերով գրավոր ուղարկել լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը, «ԳԼՈԲ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով.

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվան հաջորդող օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2024 թվականի մայիսի 13
ք.Մեծամոր

Հավելված 1
Մեծամոր համայնքի ղեկավարի
2024 թվականի մայիսի 13-ի
թիվ 1512-Ա որոշման

Մասնակցի						
Անվանումը	ՀՎՀՀ/ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
			խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
«ԳԼՈԲ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ	00131856	ք. Երևան, Երվանդ Քոչարի 19/8	X			13.05.2024թթ. ՀՀԱՄՄՀ-ԳՀՇՁԲ-24/42

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ **Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**